

ուսումն եւ խրատ մտաց: Կարծեմ, եւ ոչ միայն կարծեմ, այլ եւ հաւատամ, թէ եւ նոյն ինքն մեծիմաստն Սողոմոն, ոչ միայն մտածմամբ յարմարէր զմարգարէութիւնսն Երգոց Երգոյն ի վերայ Քրիստոսի եւ Սրբուհոյ Կուսին եւ եկեղեցւոյ եւ իւրաքանչիւր հաւատացելոց, այլ եւ յորժամ զգալապէս ուր ուրեք եւ շրջագայիլ առգիպէր, ի մարմնաւորապէս զբօսնուին՝ աղգեալ լինիւր ի Հոգւոյն Սրբոյ զտեսեալսն այլաբանել ի վերայ անտեսիցն եւ առ ապայն եղանելեաց: Քանզի բազմիցս յեղելոց իրաց՝ Աստուած ցուցանէր մտացն Մարգարէից զապագայ լինելոցսն. այսպէս Գեղէնի զգալի գեղմով զՍրբուհի Կոյսն ապացուցանէր եւ Մովսիսի զմորենի վառեալ եւ ոչ այրեալ զարգանգն անապական Կուսին գոլ ներաղգէր: Եւ զաննիւթն իմաստութիւն եւ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ, բերանովն Սիրաբայ իմաստասիրի զանազանից ծառոց եւ ծխանելեաց՝ ապացոյց տայր, որոց բոլորք էին այլաբանութիւնք: Արդ զբոլորն ի մի փունջ ծաղկի յօրինեալ եւ իբր ի մի ծովակ գրքոյ ժողովեալ հեղինակ գրքոյս Անտառի Այլաբանութեան՝ Մրգանոց Աստուածային գրոց՝ զոյն զայս գիրք մակագրեաց. արդարեւ գովելի ուսումն, բաղձալի կրթութիւն եւ ախորժելի հետեւումն եւ անձանձիր աշխատութիւն հեղինակի սորա, թէ յորքանեաց գետոց անցեալ, այսինքն՝ ի վարդապետացն մեկնութեանց եւ զծաղիկս հաւաքեալ ի մեղրաշինութիւն: Գովեմ իրաւամբ զուսումնասիրութիւն Լատինացւոց, որ շնորհացն լաւագունից նախանձաւորք լեալ, անդրազերազանցեցին զուսումնաւորութեամբն հելլենացւոց եւ ամենից աղգաց: Որք մանաւանդ առ Աստուածային խոստումն նկատելով թէ խնդրեցէք եւ տացի, զամենայն աշխատութիւն առ ոչինչ համարեցան: Եւ օտարղնէից իւրեանց եղբարց ճանապարհ առ մուտն Աստուածային Գրոց յորդեցին, որ արժան է ասել